ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄՆ

Պետերբուրգ. հոկտեմբերի 21-ին Պատշաճական. Ուկազ Կառավարիչ Սենատին.

1905 թուի հոկտեմբերի 17-ին տուած հրովարտակով Մենք կառավարութեան վրայ պարտաւորութիւն դրինք կատարել մեր անխախտ կամքը ազգաբնակութեանը պարգևելու քաղաքական ազատութեան անսասան հիմունքներ։ Պետական սոյն դէպքի համապատասխան Մենք բարւոք համարեցինք ամենից առաջ թեթևացնել այն անձանց վիճակը, որոնք նախ քան հրովարտակի հրատարակութիւնը պետական յանցանք էին գործել, ուստի ամենաողորմածաբար հրամայում ենք.

1) Ազատել հալածանքից, դատից, պատժից և այլ հետևանքներից և լիակատար ներումն շնորհել այն բոլոր անձանց, որոնք մինչև հոկտեմբերի 17-ը գործել են 1903 թուի մարտի 22-ին Բարձրագոյն հաստատուած քրէական օրէնսդրութեան 103, 104, 106, 107, 121, 125, 126 (առաջին մասի) 127, 128, 130, 131, 132, 134, (առաջին մասի 3 կէտ), 163, 164, 166 (երկրորդ մասի) և 173 (չորրորդ մասի՝ որոնք վերաբերում են առանց բռնութեան կատարուած յանցանքների) յօդուածներով նախատեսնուած յանցանքներ. նոյնպէս և որոնք մասնակցել են գործադուլներին և վարձման այն պայմանների խախտումներին, որպիսիք նախատեսնուած են պատժական օրէնսդրութեան 1358, 1358—1. 1358—3 յօդուածներով՝ համաձայն 1902 թուի հրատարակութեան և հաշտարար դատաւորներից տրուող պատիժների օրէնսդրութեան 41-դ յօդուածով. (չարունակութիւն նոյն օրէնսդրքի)։ Սոյն ողորմութիւնը տարածել որպէս դատապարտուածների և պատիժ կրողների, այնպէս էլ նրանց վրայ, որոնց դէմ դեռ քրէական գործ չի սկսուել կամ դեռ դատա-

բանի կողմից վճիռ չի եղել։ 2) Այն անձանց, որոնք պատիժ են կրում սրանից 10 տարի առաջ կատարած պետական յանցանքների համար, այն յանցաւոր միտումների, որոնց համար մատնուած էին զինուորական դատարանի Պետական կարգն ու հասարակաց խաղաղութիւն պահպանելու օրէնսդրութեան 17-դ և 31-դ յօդուածներով (յաւելուած առաջին առաջին յօդուածի 2-դ յաւելուած 14-դ հատորոյ 1890 թ. հրատարակութիւն) և զինուորական դրութիւն յայտարարած տեղերի օրէնսդրութեան 17-դ յօդուածի համաձայն. (յաւելուած 23-դ յօդուածի II հատորը հրատարակութիւն 1892 թ.) ազատել ուղղիչ պատիժներից, իսկ տաժանակիրներին փոխադրել վերաբնակութեան (на поселеніе), ինչպէս և ցայսօր տաժանակրութիւնից վերաբնակութեան անցածներին իրաւունք տալ, որ բնակութեան տեղ ընտրենց համար մայրաքաղաքներից և նրանց նահանգներից դուրս ուր էլ կամենան, երեք տարի արգելուի նրանց մայրաքաղաքներում և նրանց նահանգներում բնակուելը և յանձնել ոստիկանական հսկողութեան զրկելով նրանց փոխանակ բոլոր իրաւունքների, մի միայն պատժ. օրէնսդր. 43-դ յօդուածի համաձայն բոլոր առանձնակի անձամբ և ծագումամբ ձեռք բերած իրաւունքներից և առանձնաշնորհութիւններից։

3) Կիսել այն անձանց պատժի տևողութիւնը, որոնք չեն համապատասխանել սոյն հրամանի վերևի երկու կէտերին և որոնք դատապարտուած են մինչև 1905 թուի հոկտեմբերի 17-ը պետական յանցանքների և այնպիսի զեղծումների ու յանցաւոր միտումների համար, որոնց համար յանցաւորները մատնուած են զինուորական դատարանի համաձայն 17 և 31-դ յօդուածների, որոնք վերաբերում են պետական կարգի և հասարակաց խաղաղութեան պահպանութեան. 14-դ հատորի (1-ին յօդուածի առաջին և երկրորդ յաւելուած հրատարակութիւն 1892 թուի), իսկ ցմահ տաժանակրութեան դատապարտուածների պատիժը փոխել 15 տարուայ տաժանակրութեան. վերաբնակութեան աքսորի դատապարտուածներին և տա-

ժանակրութիւնից վերաբնակութեան փոխուածներին և փոխուելուներին թոյլատրել, որ աքսորավայրում չորս տարի մնալուց յետոյ իրենց համար բնակութեան տեղ ընտրեն համաձայն 2-դ կէտում յիշուած սահմանափակումների։ Այն կէտում մատնանշած անձանց վերաբերութեամբ հրամայում ենք զինուորական, ծովային և արդարադատութեան նախարարութիւններին նախարարական խորհրդի միջոցաւ ներկայացնել մեզ համապատասխան ամենահպատակ զեկուցումներ դատապարտուածների վիճակն աւելի ևս թեթևացնելու, եթէ նրանք չեն դատապարտուել սպանութեան համար և գործի հանգամանքների համաձայն արժանի են առանձին զիջողութեան։

4) Երկրորդ և երրորդ կէտերում յիշուած շնորհները տարածել և անձանց վրայ, որոնք յիշուած կէտերում ցոյց տրուած մինչև հոկտ. 17-ը գործած յանցանքների համար կը դատապարտուեն պատժի։

5) 1, 2 և 3-դ կէտերում յիշուած շնորհները տարածել և այն անձանց վրայ, օգտուել են նախընթաց Բարձրագոյն հրովարտակներով տրուած արտօնութիւններով. նոյնպէս և նրանց վրայ որոնց պատիժները յիշեալ կէտերում մատնանշած յանցանքների համար թեթևացրած էին մինչև հոկտեմբերի 17-ը առանձին Բարձրագոյն հրամաններով։

6) Այն անձանց, որոնք մինչև 1905 թուի հոկտեմբերի 17-ը պատժուած էին վարչական կարգով (յօդ. 1035 և հետևեալները օրէնք քրէական դատավարութեան հատոր XVI մասն I հրատ. 1892) պետական յանցաւոր գործողութիւնների համար՝ համաձայն Բարձրագոյն հրամանների և նրանց, որոնք միևնոյն տեսակ պատժի էին դատապարտուել համաձայն պետական կարգն ու խաղաղութիւնը պահպանելու կանոնադրութեան 16-դ յօդուածի չորրորդ կէտի և 32—36 յօդուածների (1-ին յօդուածի առաջին և երկրորդ յաւելուածներ օրինաց XIV-դ հատորի 1891 թ. հրատ. յանցանքների առաջն առնելու վերաբերութեամբ) ազատել պատժի մնացած մասից։

Կովկասի շրջանում վարչական եղանակով պատժի ենթարկուած անձանց վրայ սոյն կէտում յիշուած շնորհներ տարածելը գործադրում է Կովկասի Մեր Փոխարքան երկրի խաղաղացման չափով։

7) Մինչև 1905 թուի հոկտեմբերի 17-ը բոլոր մահուան դատապարտուածներին և յանցաւոր գործողութիւնների համար նոյն պատժի ենթարկուելիներին մահուան պատիժը փոխարինել 15 տարուայ տաժանկիր աշխատանքով։

8) Սոյն հրովարտակի 1, 2, 3, 4, 6, 7 կէտերում յիշուած շնորհների գործադրութիւնը յանձնել զինուորական և քաղաքացիական դատարանական հաստատութիւններին, եթէ դեռ վճիռներ չեն տրուած, օրինական ոյժ չեն ստացել կամ գործադրութեան չեն յանձնուել. իսկ տաժանակրութեան, վերաբնակութեան և վարչական եղանակով աքսորուածների վերաբերութեամբ՝ յանձնել Ներքին գործոց նախարարութեան, տեղական նահանգական և շրջանային վարչութիւններին, իսկ մնացած բոլոր դէպքերում՝—դատախազներին։ Սոյն ուկազի գործադրութեան մասին ծագած կասկածների վերաբերութեամբ բոլոր պետական տեղերը պարտաւոր են դիմել կառավարիչ Սենատի առաջին դէպարտամէնտին, որը՝ իւր իրաւասութիւնից վերը եղած դէպքերում օրինական կարգաւ հայցում է լուծումն Մեր կողմից։ յանձնում ենք կառավարիչ Սենատին տնօրինել ինչ որ պէտք է սոյն կարգադրութիւնն իրագործելու համար։

Իսկականի վրայ ստորագրուած է ՆԻԿՈԼԱՑ։

Պետերհոֆ 1905 թ. հոկտ. 24-ին։